ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԴՍԵՂ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ամենայն հայոց բանաստեղծն այսպես է բնութագրել իր հայրենի գյուղը.<<Դսեղը յուր անառիկ ու չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի>>: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացված է հարավից անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմերից խոր ձորերով: Դսեղը Հայաստանի հնագույն և հանրահայտ գյուղերից է: Գոյություն ունի Դսեղ անվան ստուգաբանության հետ կապված երկու տարբերակ. Դսեղ նշանակում է դուրս տեղ, այսինքն բնակավայրից զատված, առանձնացված տեղ, երկրորդը ըստ ավանդազրույցի ձորի գյուղերից տարբերելու համար սարահարթի գյուղը կոչել են Դրսի գեղ կամ Դսեղ: Գյուղն, ըստ գիտական հիմնավորումների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա.: Գյուղի շրջակայքում կան քարանձավներ Դռնավոր էրըե, Ծակ քարը և գյուղից Ձորագես իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որոնք հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործել են՝ որպես կացարան, իսկ հետագայում օգտագործվել են միայն անասունների համար: Դսեղ անունն առաջին անգամ հիշատակվում է 15-րդ դարի սկզբին: Հակոբ Գ Ասեցի կաթողիկոսը 1404-1411թթ. Դսեղը հիշատակում է Սանահինի հարկատուների ցուցակում: Գյուղը հարուստ է բազմապիսի հուշարձաններով՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կոթողներ, կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն: Գյուղի անցյալը սերտորեն կապվում է Մամիկոնյան նշանավոր տոհմի շինարարական և բարենորոգչական գործունեության հետ:Գյուղի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ, եկեղեցիներ: 19-րդ դարի II կեսի պեղումների և 1967-69թթ. գյուղի ներկայիս կենտրոնի կառուցապատման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ք.ա. 1.դ. գերեզմաններ և բրոնզե դարի կենցաղային իրեր:

Պահպանվել են նաև վաղ միջնադարին վերագրվող բաղնիքի խճանկարհատակը, բազիլիկ եկեղեցու (654թ.) ավերակները ազգագրական թանգարանով. Մամիկոնյան իշխանների հիմնադրած և 12դ. վերակառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, խաչքարերով և կոթողով գերեզմանատունը (10-11դ.դ.), խաչարձաններ (11դ.): Գյուղի անմիջական հարևանությամբ են գտնվում Քառասունից Մանկանը (12դդ), և Մամիկոնյանների հիմնադրած Բարձրաքաշ Ս. Գրիգոր (11դ.դ.) վանքերը, Սիրուն խաչ խաչքարը (11դ):Գյուղում գտնվող գերեզմանատանը կան բազում այլ խաչքարեր, հուշակոթող և 7րդ դարի մի փոքր բազիլիկ եկեղեցու ավերակները: Գյուղի տարածքում կա չորս մատուռ, որից կանգուն են մնացել Սբ. Սարգիս և Գդիգլխի Բալա Գիքորի կառուցած մատուռները: Դսեղը մեծանուն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդավայրն է, և նրա հայրենի տանը գործում է վերջինիս տուն-թանգարանը: Գյուղի կենտրոնում վեր է խոյանում բրոնզաձույլ արձանը(հեղինակ Ղ. Չուբարյան): Գյուղի կենտրոնում Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են VII դարին: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 20-րդ դարի սկզբին վերակառուցվել է:Գյուղի հարավ-արևելքում գտնվող Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում .Ծովեր կոչվող գեղեցիկ լիճը: Խորհրդային շրջանում այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Դսեղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջափնյա սարահարթի վրա: Դսեղի հանդի սահմանները հարավից սկսվում են զովասուն բարձր լեռներով, հյուսիսում վերջանում են անդնդախոր ձորերով: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30կմ է, Երևանից՝ 150կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրաղու Վանաձոր-Ալավերդի հատվածից 8կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու Թումանյան կայարանից՝ 10կմ է: Գյուղը հյուսիսից

սահմանակցում է Քարինջի, գյուղին, Թումանյան քաղաքին և Ծաթերի համայնքային հողերին, արևելքից՝ Դսեղի անտառտնտեսության, իսկ արևմուտքից՝ Գուգարքի անտառ տնտեսության հողերին:

3. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բնակավայրի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 829-2180մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան:

Դսեղն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ և խոնավ կլիմայով: Տարվա մեծ մասը գյուղը ենթարկվում է Միջերկրական և Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է մայիս-հունիս ամիսներին: Ամռանը և աշնան երկրորդ կեսին Դսեղում գերակշռում է ցածր խոնավությամբ տաք օդը:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	17
2.2) մայրաքաղաքից (կմ)	150
2.3) մարզկենտրոնից (կմ)	30
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	50
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	32
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	8
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	10
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1350
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	79,22/7922,34
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Չկակով, Դեբեդ, Մարց, Թումանյան
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	093-50-43-92
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2121
2. Գրանցված ծնունդների քանակը	27
2.Մահացության դեպքերի քանակը	24
3.Ամուսնությունների քանակը	11
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	621
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	35
7. Կենսաթոշակառուների քանակը	412
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	47

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	2
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	43460
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1

3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	651

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5039,59
2. Բնակավայրերի հողեր (հա)	184,62
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	35,51
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	3,09
5. Հատուկ նշանակության	6,36
6. Հատուկ պահպանվող տարածքների	45,49
7. Անտառային	2593,39
8. Ջրային	14,29
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1568
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	298
11. Խոզերի գլուխաքանակը	891
12. Գյուղատնտեսական տեխնիկա	10
12.1 տրակտորներ (քանակը)	10
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	651

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	5
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	30
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	0
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	0
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0

6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	8
1.1 համայնքային ծառայողներ	5
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	8

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
1. Դսեղ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի բարելավում:	Թումանյան համայնքի միջոցների ներդրմամբ, կառավարության և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ :